ՁԵՌԱԳՐԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՓՈՐՁ ԸՍՏ ՄԱԿԱԲԱՅԵՑՈՑ ԳՐՔԵՐԻ

Բանասիր. գիտ. դոկտոր Հ. Մ. ԱՄԱԼՅԱՆ

Աստվածաշունչը բարդ, բնագրային համադրական ամբողջություն է, կազմված տարբեր ժամանակներում ապրած հեղինակների գրչին պատկանող գործերից։ Կանոնական կամ արտականոն համարված գրքերի ու գրվածքների այդ ժողովածուն աչքի է ընկնում բովանդակության բազմազանությամբ, լեզվառճական անմիօրինակությամբ, կանոնի անկայունությամբ և ամբողջ նյութի ներքին կառուցվածքով։ Այդ երկի հայերեն թարգմանությունը հետագայում, XIII դարից սկսած, օժտվել է գրքերին առընթեր նախադրություններով, գլխացանկերով, գլխաբաժանման նոր նիշերով և այլ գծերով։ Եվ որպես այդպիսին, Աստվածաշունչը տարբերվում է հայերեն մյուս բոլոր միջնադարյան բնօրինակ ու թարգմանական գործերից թե՛ բնագրային և թե՛ արտաքին շատ հատկանիշներով։ Հետևաբար, Աստվածաշնչի հայերեն թարգմանության ձեռագրերի դասակարգումն ըստ բոլոր հատկանիշների զգալիորեն տարբերվում է սովորական, գլխավորապես զուտ բնագրային՝ ըստ խմբագրությունների ու դրանց տարբերակների կատարված դասակարգումից։ Գրոց կանոնը, նախադրությունների, գլխացանկերի, արտականոն գրքերի առկայությունը կամ բացակայությունը, գլխաբաժանման ու տնատման տարբերությունները բուն բնագրի նկատմամբ հանդես են գալիս որպես արտաքին հատկանիշներ՝ կազմելով բնագրի արտաքին կողմի ամբողջությունը։

Ձեռագրերը կարելի է դասակարգել, իհարկե, հիմնվելով բնագրի նշված երկու հիմնական կողմերից թե՛ մեկի և թե՛ մյուսի վրա, ինչպես նաև այլ հանգամանքների հաշվառումով՝ հետազոտողի նպատակներին համապատասխան։ Մինչդեռ լիարժեք գիտական դասակարգումը պետք է հիմնվի բազմաթիվ հատկանիշների վրա, հաշվի առնելով բնագրի ներքին՝ բուն բնագրային և արտաքին բոլոր հատկանիշները, որոնք, սակայն, համահավասար տարբերակիչ նշանակություն ու արժեք չունեն։ Աղբյուրների բազմահատկանիշ դասակարգման համար մեզ հասած բոլոր ձեռագրերից (կամ դրանց մանրաժապավեններից) բացի անհրաժեշտ է ունենալ նաև գիտահամեմատական բնագրեր։ Առանց վերջինների հնարավոր չէ ոչ միայն ձեռագրերի լիարժեք դասակարգում կատարել, այլև, առհասարակ, գիտականորեն լուծել Աստվածաշնչի պատմական ու բանասիրական հարցերը կամ դրանք առնվազն հավաստի եզրակացությունների հանգեցնել։

Ընդհանուր ուսումնասիրությունները և մասնավորապես բնագրային համեմատությունները ի հայտ են բերում Աստվածաշնչի ձեռագրերի բազմապիսի տարբերություններ։ Մակաբայեցոց գրքերը պարունակող ավելի քան ութսուն ձեռագրերից դժվար է ընտրել մի քանիսը, որոնք ըստ ամենայնի նույնական լինեն։ Նույնիսկ ծագումնաբանորեն հարազատ ձեռագրերը երբեմն հանում ուղղագրական ու գրչագրական հանգամանքների սահմաններից դուրս

եկող տարբերություններ, ինչպես արտականոն գրվածքների առկայություն կամ բացակայություն, խորագրերի տարաձևություններ, գլխաբաժանման նշումների անմիօրինակություն և այլն։

Դա վկայում է հատկապես XII—XIII դդ. Աստվածաշնչի ընդօրինակման ուղղությամբ ծավալված աշխատանքի բազմակողմանիությունը, բնագրի ու կանոնի հարցերով զբաղվողների, գրիչների ու ծաղկողների, ինչպես նաև դրչագրական դպրոցների և օջախների բազմությունը։

Աստվածաշնչի ձեռագրերի գիտական դասակարգման հարցը բավական կնճռոտ է, դրա լուծումը բարդացնում ու խոչընդոտում են բնագրաբանական, ինչպես նաև այլ բնույթի մի շարք հանգամանքներ։ Դրանք են գլխավորապես.

ա) Ձեռագրերի բազմությունը։

բ) Բնագրի խմբագրությունների, խմբագրական, սրբագրական ու գրչագրական զանազան տարբերակների առկայությունը։

գ) Ձեռագրերի ծագումնաբանական այլազանությունը՝ բնագրի տարբեր մասերի՝ տարբեր նախօրինակներից արտագրված լինելը։

դ) Տարբեր նախօրինակներից ծագող ձեռագրերից մեկը մյուսի միջոցով սրբագրելու և նմանեցնելու հանդամանքը։

ե) Նախադրությունների ու ցանկերի նախօրինակային կարգի փոփոխումները, որոնք արդյունք են այդ նյութերի նկատմամբ գրիչների համեմատաբար ազատ մոտեցման, երբեմն թելադրված տեղի արդյունավետ օգտագործման պահանջներից։

զ) Հին ձեռագրերի էջերում տեղ գտած հետագա ավելացումները, ջնջումները և այլ միջամտումները։

է) Զանազան նյութական թերություններով, անփույթ ջնջումներով, խառնաշփոթ ուղղումներով ու սրբագրումներով և այլ պատճառներով պայմանավորված անընթեռնելի տեղերի առկայությունը ձեռագրերում։

ը) Թերթերի ու պրակների անհայտացման պատճառով բնագրի առանձին դատվածների ու մասերի բացակայությունը մի շարք ձեռագրերում։

թ) Շատ ձեռագրերի գրության ժամանակի, վայրի, գրչագրական դպրոցի անհայտությունը։

ժ) Բոլոր ձեռագրերի մի տեղում կենտրոնացված չլինելը և այլն։

Աստվածաշնչի հայերեն ձեռագրերի դասակարգման առաջին լուրջ փորձը կատարել է հայ մշակույթի գրավոր հուշարձանների լավագույն գիտակ Մ. Տեր-Մովսիսյանը՝ Աստվածաշնչի հայերեն թարգմանության պատմությանը նվիրված իր արժեքավոր մենագրության մեջ մի ընդարձակ բաժին հատկացնելով ձեռագրերին[1]։ Նա, իր աշխատության խնդիրներին համապատասխան, ձեռագրերի մանրամասն բնագրաբանական համեմատություններ չկատարելով, գիտահամեմատական բնագիր չկազմելով, այլև նման բնագիր ձեռքի տակ չունենալով, տվել է Աստվածաշնչի այն ժամանակ հայտնի բոլոր հայերեն ձեռագրերի դասակարգումը։ Այդ աշխատանքը նա կատարել է ձեռագրերի արտաքին հանգամանքների ուշադիր քննումներով, համեմատումներով, ինչպես նաև ձեռագրերի գրչագրման ու պատմության կարևոր հարցերի լուսաբանու-

---

1 Տե՛ս М. Тер-Мовсесян, История перевода Библии на армянский язык, СПб., 1902, էջ 76—185։

թյամբ։ Հիմք ընդունելով բնագրի արտաքին հատկանիշները՝ գրոց կանոնը, նախադրություններն ու ցանկերը, արտականոն գրքերն ու գրվածքները և մասամբ այլ պարագաներ, Մ. Տեր-Մովսիսյանը Աստվածաշնչի հայերեն ձեռագրերը բաժանել է հինգ հիմնական խմբի.

1. Հին ձեռագրեր, որոնք չունեն Գևորգ Սկևռացու կազմած նախադրություններն ու գլխացանկերը։

2. Սկևռական խումբ. նախադրություններ ու գլխացանկեր ունեցող ձեռագրեր, որոնցում, Հ. Զոհրաբյանի հրատարակած բնագրի համեմատությամբ, «Սողոմոնի իմաստությանը» հաջորդում է «Սիրաքը», «Դանիելի մարգարեությանը»՝ «Երեմիայի մարգարեությունը», «Կորնթացւոց երրորդ թուղթը» երբեմն դրվում է բոլոր թղթերից հետո։ Ձեռագրերի մի մասն ունի «Հանգիստ Յովհաննու»։

3. Նախադրություններ և գլխացանկեր ունեցող ձեռագրեր, որոնք ունեն «Հանգիստ Յովհաննու», չունեն «Սիրաք», «Դանիելի մարգարեությունը» գալիս է «Երեմիայի մարգարեությունից» հետո։ Մի քանի ձեռագրերում «Հոբը» սաղմոսներից առաջ է։

4. Ձեռագրեր, որոնք բացի նախադրություններից ու գլխացանկերից, ունեն նաև տասներկու նահապետների կտակները, Հովսեփի և Ասանեթի պատմությունը։ Դրանցում «Եզրի Գ»-ն դրված է «Եզրի Բ»-ից կամ կտակներից կամ էլ Մակաբայեցոց գրքերից հետո։

5. Ղաղար Բաբերդցու կազմած բնագրի ձեռագրերը, որոնք, բացի նախադրություններից և գլխացանկերից, ունեն կաղմողի առաջաբանը, բոլոր արտականոն գրքերը, կանոնի աղյուսակները և գրոց բառերի այբբենական ցանկը։

Այդ ընդհանուր դասակարգումը, իր թերություններով հանդերձ, կարևոր նշանակություն է ունեցել (և այսօր էլ ունի) Ս. Գրոց բնագրի ու պատմության ուսումնասիրության համար։ Իր դասակարգման մասին, միանգամայն տեղին ու իրավացի կերպով, Մ. Տեր-Մովսիսյանը գրում է. «Ըստ արտաքին հատկանիշների այսպիսի խմբավորումն անկասկած կարող է նշանակալիորեն թեթևացնել բուն բնագրի համեմատության և հասկացման գործը։ Ես գտնում եմ, որ չի կարելի բավականանալ նշված արտաքին հատկանիշներով և դրանց վրա հիմնվելով՝ ձեռագրերն այս կամ այն խմբին վերագրել և որ հնարավոր են դեպքեր, երբ ձեռագիրն իր արտաքին կազմով պատկանի մի խմբի, իսկ ըստ բնագրի պետք է վերագրվի ուրիշ խմբի»[2]։

Ստորև փորձ է արվում Աստվածաշնչի ձեռագրերը դասակարգել նոր սկզբունքով ու դրա կիրառման յուրատեսակ եղանակով։ Տարիներ առաջ, Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրինության հանձնարարությամբ, մենք ձեռնարկեցինք Աստվածաշնչի Մակաբայեցոց գրքերի քննական բնագրի ստեղծման աշխատանքը։ Մատենադարանի և արտասահմանյան ավելի քան 80 ձեռագրերից ընտրված 40 ձեռագրերի լրիվ և Աստվածաշնչի 3 տպագիր օրինակների[3] մասնակի համեմատության միջոցով կազմվեցին Մակաբայեցոց

---

2 Նույն տեղում, էջ 181—182։

3 Աստուածաշունչ Հնոց և Նորոց կտակարանաց, Ամստերդամ, 1666։ Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց, Վենետիկ, 1805։ Գիրք Աստուածաշունչք Հին և Նոր կտակարանաց, Վենետիկ, 1860։

գրքերի գիտահամեմատական բնագրերը։ Մեր խնդիրներից մեկն էլ ձեռագրերի գիտական դասակարգումն էր, որի համար քննական բնագրի մեջ ընդգրկված ձեռագրերից բացի, առանձին, 10—15 տուն պարունակող հատվածներով համեմատվեցին նաև մյուս ձեռագրերը։ Դասակարգման համար ընտրվեցին Մակաբայեցոց Ա և Բ գրքերի սկզբի, մեջտեղի և վերջի հատվածները, Գ գրքի սկիզբը և վերջին (Է) գլուխն ամբողջությամբ։ Այդպիսով ձեռքի տակ եղան 75 ձեռագրերի և մեկ տպագրության (1666 թ.) վերոհիշյալ հատվածների տարընթերցվածները։ Սակայն եղած նյութը բավարար չհամարվեց նախատեսված դասակարգման համար։ Ուստի կազմվեցին նաև բնագրերի արտաքին նկարագիրն ու գրչագրական հանգամանքները պատկերող քարտեր՝ հետևյալ փաստերի գրանցումով։ Օ-աւ, Է-ե գրությունները, թվականների՝ համապատասխան տառերով, դրանց զուգորդումներով և բառերով գրությունները, գլխաբաժանման ֆռ (ֆռանգաց) համառոտագրությունը, միջտողային ու լուսանցային սրբագրումների ու ավելացումների առկայությունը, Մակաբայեցոց գրքերի տեղը տվյալ ձեռագրում, ինչպես նաև տառատեսակները, գրի ընթեռնելիության աստիճանը և այլն։ Քարտերի մյուս էջում նշվեցին Աստվածաշնչի ամբողջ կանոնը, նախադրություններն ու գլխացանկերը, արտականոն գրքերն ու գրվածքները։ Քարտերից բացի ձեռքի տակ էր նաև ձեռագրացուցակներից քաղված տեղեկատու ցանկը, որտեղ ձեռագրերի դիմաց նշված է դրանց պայմանական նիշն ըստ Ա. Ջեյթունյանի աշխատության[4], գրության ժամանակը, վայրը, գրիչը, նյութական վիճակը, պահպանության վայրը և այլն։

Ներքևում տրվող դասակարգումը հիմնված է բնագրային ու ձեռագրական բոլոր էական հատկանիշների վրա։ Ձեռագրերը խմբվում են աստիճանաբար, հաշվողական տվյալների հիման վրա։ Դասակարգման եղանակը հաշվողական է կոչվում, որովհետև բուն բնագրին վերաբերող հատկանիշները՝ տարընթերցվածները, հաշվի են առնվում քանակային հարաբերություններով, դրանց ամբողջությունը յուրաքանչյուր ձեռագրում դիտվում է որպես անդամների որոշակի թիվ ունեցող բազմություն։ Ընդ որում, վերջնական դասակարգումը ստացվում է մեկը մյուսով պայմանավորված հաջորդական գործողությունների ընդհանուր արդյունքը ձեռագրերի արտաքին հատկանիշների հետ բաղդատելուց հետո։ Սակայն մեր դասակարգումը, եթե ոչ իր սկզբունքով ու կատարման եղանակով, ապա ըստ հատկանիշների ծավալային ընդգրկման, այնուամենայնիվ, միակողմանի է։ Նախ, ծավալային առումով համամասնություն չկա դասակարգման երկու հիմնական կողմերի միջև. արտաքին հատկանիշները հաշվի են առնվում Աստվածաշնչի ամբողջ բնագրում, մինչդեռ բնագրային փաստերը վերցվում են միայն Մակաբայեցոց գրքերի առանձին հատվածներից։ Ապա, փաստորեն դասակարգվում են միայն Մակաբայեցոց գրքերն ունեցող ձեռագրերը և դա համարվում է Աստվածաշնչի ձեռագրերի դասակարգում առհասարակ, այն դեպքում, երբ տեսադաշտից դուրս են մնում այն բոլոր ձեռագրերը, որոնք չունեն Մակաբայեցոց գրքերը։ Մինչդեռ ըստ ամենայնի լիարժեք գիտական դասակարգման համար անհրաժեշտ է օգտագործել բոլոր

---

4 Ա. Ջեյթունյան, Աստվածաշնչի հայերեն թարգմանության ձեռագրական միավորների դասակարգման մասին, «Բանբեր Մատենադարանի», № 12, 1977, էջ 295—304։ Աստվածաշնչի Ոսկան Երևանցու հրատարակությունը (1666 թ.) նշանակված է լատինական a տառով։

ձեռագրերը, ձեռքի տակ ունենալով Աստվածաշնչի, եթե ոչ բոլոր, ապա գոնե Հին և Նոր կտակարանների մի քանի գրքերի գիտահամեմատական բնագրերը։

Դասակարգման մեր հիմնական սկզբունքն է ձեռագրերը խմբավորել ըստ բնագրային հատկանիշների, ապա ձեռագրախմբերն ստուգել ու ճշգրտել ըստ բնագրի արտաքին հատկանիշների։

Դասակարգման համար ընտրված բնագրային հատվածների տարընթերցվածները բաժանված են երկու հիմնական խմբի. ա) խմբագրական նշանակություն ունեցող տարընթերցվածներ՝ հիմք բնագրի համեմատությամբ, բառային, բառակապակցական, ոճական, շարագասական շեղումներ, հետագա կարևոր ավելացումներ և սրբագրումներ, բ) խմբագրական տեսակետից չեզոք տարընթերցվածներ՝ հոգերի ու նախդիրների սխալ գործածություն, չհոլովված դերանուններից հետո յ-ի գրություն, երկձևություններ ու ձևաբանական այլ շեղումների դրսևորումներ, այլև գրչագրական սխալներ ու վրիպումներ, պատահական բացթողումներ ու աղավաղումներ և այլն[5]։

Որպես տարբերակիչ հատկանիշներ հաշվի են առնվում առաջին կարգի՝ խմբագրական բնույթի, տարընթերցվածները[6], որոնց թիվը մեր ընտրած հատվածներում 82 է։ Դրանք, ըստ բնագրային հաջորդականության, դասավորելով ձախ կողմում, ուղղահայաց շարքով, վերևում հորիզոնական շարքով դասավորված ձեռագրանիշերի ուղղահայաց սյուներում տարընթերցվածների առկայությունը և բացակայությունը + և — սիմվոլներով նշելով՝ ստանում ենք մի առաղրական տախտակ։ Համապատասխան սյուների վերջում գրանցելով նշույթավոր (+ նշան ունեցող) տարընթերցվածների (այսուհետև՝ ՆՏ) և տարընթերցվածների ընդհանուր քանակը ցույց տվող թվերը՝ արդեն կարող ենք գործողություններ կատարել ձեռագրերի զուգորդումներով։ Տախտակը, որ առաջին հայացքից ընդհանուր պատկերացում է տալիս բնագրերի մասին, հիմք է հետագա գործողությունների համար։

Առաղրական տախտակից պարզվում է, որ վերցված 82 տարընթերցվածներից ՆՏ թիվը ձեռագրերում տատանվում է 2-ից 48-ի միջև։

$C_5F_9O_1$ ձեռագրերն ունեն 2, իսկ J_6-ը՝ 48 ՆՏ, հիմք բնագրից չեն շեղվում 4 ձեռագրեր՝ $E_2L_3N_1O_6$ որոնք, հետևաբար, ունեն զրո ՆՏ։ Ըստ ՆՏ մենք տեսնում ենք ձեռագրերի հարաբերությունը հիմք բնագրի հետ։ Պետք է նաև որոշել ձեռագրերի՝ միմյանց հետ ունեցած հարաբերությունը։ ՆՏ թիվը ձեռագրերի նմանության ցուցանիշ չէ, որովհետև տարբեր քանակով կամ հավասար թվով ՆՏ ունեցող ձեռագրերը կարող են չունենալ համընկնում, այսինքն չունենալ ընդհանուր տարընթերցվածներ։ Ձեռագրերի նմանությունը

5 Մ. Ստոունը, փորձելով Եսայիի գրքի հին հայերեն ձեռագրերի համեմատության միջոցով որոշել հրատարակության համար հիմք բնագիրը, տարբերում է 4 կարգի տարընթերցվածներ՝ *ուղղագրական տարբերակներ* (spelling variants), *ակնհայտ աղավաղումներ* (clear corruptions), *չեզոք տարբերակներ* (indifferent variants) *և խմբագրական տարբերակներ* (versional variants): *Տե՛ս* Michael E. Stone, The old armenian version of Isaiah: towards the choice of the Base Text for an Edition: Textus Annual of the Hebrew University Bible project, vol. VIII, Jerusalem, 1973, *էջ 109*.

6 Ձեռագրերի դասակարգման համար, որպես տարբերակիչ հատկանիշներ, կարևոր են խմբագրական բնույթի տարընթերցվածները։ Ուստի մյուս բոլոր տարընթերցվածները, անկախ դրանց բնույթից, մենք համարում ենք խմբագրական տեսակետից չեզոք։

որոշելու համար պետք է վերցնել ընդհանուր տարընթերցվածները յուրաքանչյուր զույգ ձեռագրի համար։

Իսկ, շարունակելով գործողությունները, անհրաժեշտ է առաջական տախտակի հիման վրա կազմել համընկնումների տախտակը՝ զուգորդությունների միջոցով։ Մեր վերցրած 76 աղբյուրների համար կունենանք 2850 զուգորդություն։ Ինչպես տեսնում ենք, ստացվում է զուգորդությունների մի ընդարձակ տախտակ, որը հարմար չէ այստեղ բերել։ Անհրաժեշտության դեպքում կարելի է նման տախտակներ կազմել ձեռագրային առանձին խմբերի համար։ Ահավասիկ մի այդպիսի մասնավոր զուգադրական տախտակ ձեռագրախմբերից մեկի համար։ Վանդակներում գրված է համապատասխան զուգորդների ՆՏ համընկումների թիվը, իսկ ներքևի և աջ կողմի վերջին սյունակների վանդակներում՝ ձեռագրերի ՆՏ ընդհանուր թիվը։ Ձեռագրերը դասավորված են ըստ ՆՏ թվերի աճման կարգի։

Ձռ.	H_3	P_o	G_3	U_o	I_1	C_o	N_o	H_4	G_1	G_5	J_o	ՆՏ
H_3		10	10	11	14	9	9	11	10	10	10	18
P_o	10		7	9	10	8	11	12	11	13	13	18
G_3	10	7		18	14	11	17	17	18	17	18	22
U_o	11	9	18		20	12	20	18	24	22	23	26
I_1	14	10	14	20		15	23	13	25	24	25	31
C_o	9	8	11	12	19		22	22	21	30	23	34
N_o	9	11	17	20	23	22		32	33	35	35	40
H_4	11	12	17	18	13	22	32		35	30	35	41
G_1	10	11	18	24	25	21	33	35		39	39	45
G_5	10	13	17	22	24	20	33	30	39		38	44
J_o	10	13	18	23	25	23	35	35	39	38		48
ՆՏ	18	18	22	26	31	34	40	41	45	44	48	

Այս աղյուսակի տվյալների համաձայն կարելի է արդեն առանձնացնել իրար նման ձեռագրեր ըստ բերված թվերի՝ ըստ համընկնումների. որքան մեծ է համընկնումը, այնքան մոտ կամ հարազատ են ձեռագրերը։ Օրինակ G_1 և G_5 ձեռագրերը, որոնք ունեն համապատասխանաբար 45 և 44 ՆՏ և 39 համընկնում, նման են, ծագում են միևնույն աղբյուրից կամ դրանցից մեկն ընդօրինակված է մյուսից։ Սակայն համընկնումը ձեռագրերի նմանության վերջնական ցուցանիշ չէ, որովհետև ձեռագրերի նմանությունը ցույց է տալիս միայն ըստ ՆՏ, ըստ հատկանիշների ընդհանրության, առանց դրանց տարբերությունների հաշվառման։ Մինչդեռ ձեռագրերի իրական նմանությունը, որի թվային արտահայտությունն անվանում ենք նմանության ցուցիչ (այսուհետև՝ ՆՑ) ստանում ենք և՛ համընկնումների, և՛ տարբերությունների միաժամանակյա հաշվառումով։

Ձեռագրերի բացարձակ նմանություն կունենանք ՆՏ և համընկնման թվերի հավասարության դեպքում։ Մնացած դեպքերում, երբ նման հավասարություն չկա, ՆՑ ստանալու համար գործ ունենք ՆՏ և համընկնման թվերի տարբերությունների հետ, դրանով իսկ հաշվի առնելով ձեռագրերի

և՛ նմանությունները, և՛ տարբերությունները, որոնց ամբողջությունը արտահայտվում է ՆՑ մեջ։ Վերջինս ստանում ենք հետևյալ կերպ. m և n թվով ՆՏ ունեցող A և B ձեռագրերի k համընկնման դեպքում կունենանք $\frac{k}{M}$ և $\frac{k}{N}$։ Համընկման և ՆՏ թվերի հարաբերությունը արտահայտող այդ կոտորակներն անվանում ենք նմանության մաս։ Երկու ձեռագրերի նմանության մասերի հարաբերությունը այդ ձեռագրերի ՆՏ թվերի հարաբերությունն է, այսինքն՝ $\frac{k}{M} : \frac{k}{N} = \frac{N}{M}$, որն անվանում ենք նմանության գործակից (այսուհետև՝ ՆԳ)։ ՆՑ հավասար է ՆԳ և համընկնման արտադրյալին, այսինքն՝ $ՆՑ = \frac{N}{M} \cdot k$։ Այս բանաձևից հետևում է, որ ՆՑ երբեք չի կարող մեծ լինել համընկնման թվից և դրա սահմանը k-ն է ՆՏ հավասարության դեպքում, երբ $\frac{N}{M} = 1$։ Մյուս բոլոր դեպքերում ՆՑ փոքր է k-ից, երբ ՆՏ թվերը հավասար չեն և ՆԳ կոտորակային թիվ է։ Հաշվումների ժամանակ, հետևաբար, հարմար է ՆՏ փոքր թիվը բաժանել մեծի վրա, հակառակ դեպքում հաշվումները կձգձգվի միջակա գործողություններով։ ՆՑ ուղիղ համեմատական է ՆՏ մեծությանը։ Հաշվենք, օրինակ, հիշատակված G_1 և G_5 ձեռագրերի ՆՑ, որը հավասար է $\frac{44}{45} \cdot 39 \approx 38$ (0,5-ից փոքր կոտորակային մասի անտեսումով)։ Այդպես կարող ենք հաշվարկել ձեռագրերի բոլոր զույգերի ՆՑ և, համընկնումների տախտակի նման, կազմել ՆՑ տախտակը։

Ձեռագրերի նախնական խմբերը առանձնացնում ենք ՆՏ թվերի օգնությամբ. թվերը դասավորելով աճման կարգով՝ ստացված թվաշարքը հաջորդաբար կիսելով բաժանում ենք հատվածների՝ ՆՏ թվերի դիմաց գրելով համապատասխան ձեռագրանիշերը։ Թվաշարքի հատվածներն ընդունում ենք որպես ձեռագրերի պայմանական խմբեր։ Ապա համընկնումների և ՆՏ միջոցով ճշգրտում ենք ձեռագրերի բաշխումն ըստ խմբերի։ Թվերին նայելով, առանց դժվարության կարելի է տեսնել, թե ձեռագրերը կարո՞ղ են թողնվել կամ չթողնվել տվյալ պայմանական խմբում։ Կողմնորոշման համար մոտավորապես ընդունում ենք, որ եթե ձեռագրերի համընկնումը պակաս է դրանց ՆՏ կեսից, այսինքն՝ տվյալ ձեռագրի համար նմանության մասը փոքր է 0,5-ից, ապա այդ ձեռագրի պատկանելությունը տվյալ պայմանական խմբին որոշակի չէ։ Ուստի այդ ձեռագիրը պետք է համեմատել նախ հարևան, ապա մյուս խմբերի ձեռագրերի հետ և որոշել դրա տեղն ըստ ՆՑ ամենամեծ թվի։

Ձեռագրախմբերի որոշումից հետո մնում է բաժանումներ կատարել այդ խմբերի ներսում, ցույց տալ ձեռագրերի ծագումնաբանական կապը, դրանց

մոտիկության կամ նմանության աստիճանը։ Դա կատարվում է արդեն ձեռագրերի զուգորդումով՝ ՆՑ ճշգրիտ հաշվարկումների միջոցով։ Նախնական խմբերը որոշելիս ՆՏ մենք հաշվեցինք որպես սկզբնական, իդեալական վիճակ ընդունված հիմք բնագրի համեմատ, որի ՆՏ=0։ Այժմ, ներխմբային դասդասման համար, որպես սկիզբ, որպես տվյալ խմբի համար հիմք ընդունում ենք այն ձեռագիրը, որն ավելի փոքր թվով ՆՏ ունի։ Խմբում միևնույն թվով փոքր ՆՏ ունեցող մեկից ավելի ձեռագրերի առկայության դեպքում հիմք ենք ընդունում այդ ձեռագրերից հնագույնը, որով և սկսում ենք զուգորդումները։ Հաշվարկում ենք ՆՑ բոլոր զույգերի համար։ Հիմք ձեռագրից հետո դնում ենք այն ձեռագիրը, որն ամենամեծ ՆՑ ունի այդ ձեռագրի հետ, ապա՝ այդ երկրորդ ձեռագրի հետ ամենամեծ ՆՑ ունեցող ձեռագիրը և այդպես մինչև վերջ։ Հարմար է ձեռագրախմբի համար զուգորդումները կատարել հիմք ձեռագրի հաջորդական բացառումով՝ զուգորդությունների փոքր շարքեր ստանալու համար, երբ յուրաքանչյուր հաջորդ շարք սկսվում է նախորդ շարքից որոշված նոր հիմք ձեռագրով։ Օրինակ՝ ABCDEF խմբի համար կունենանք հետևյալ շարքերը.

[A]BCD(E)F
[E]BC(D)F
[D](B)CF
[B]C(F)
[F](C)
[C][7]

Ուրեմն վերոհիշյալ խմբի ձեռագրերը պետք է դասավորվեն AEDBFC կարգով։ Աշխատանքը թեթևացնելու համար ձեռագրանիշերը պետք է շարել ըստ ՆՏ աճման։ Փոքր համընկնում ունեցող զույգերի համար կարելի է ՆՑ չհաշվարկել։ Միևնույն թվով ՆՏ և հավասար համընկնում ունեցող զույգերից ՆՑ բավական է հաշվել միայն մեկ զույգի համար։ Նպատակահարմար է խմբերի ներսում առանձնացնել քանակով մոտ ՆՏ ունեցող ձեռագրերի ենթախմբեր և, դրանց միավորների ՆՑ հաշվարկումներից հետո, ամփոփելով տալ ամբողջ խմբի ընդհանուր պատկերը։

Ձեռագրախմբերում ՆՑ թվերի հետազոտության միջոցով ուրվագծվում են բնագրերի 3 հիմնական տիպեր.

ա) Նույնական բնագրեր, երբ մեկը արտագրված է մյուսից և ՆՑ հավասար է համընկնմանը կամ դրանից շեղվում է նվազագույն (1-ի) տարբերությամբ։

բ) Մեկը մյուսից ծագող, բայց նույնությամբ չարտագրված բնագրեր, որոնց ՆՑ մոտ է համընկնմանը՝ 2—3-ի տարբերությամբ։

գ) Մեկ ընդհանուր, անհայտ նախօրինակից ծագող բնագրեր, որոնց

---

7 Անկյունավոր փակագծի մեջ առնված է հիմք ձեռագիրը նշող տառը, իսկ փոքր փակագծում՝ առաջինի հետ ամենամեծ ՆՑ ունեցող ձեռագրի նիշը, որը դրվելու է հաջորդ շարքի սկզբում։

ԵՕ 3-ով (և ավելի) է տարբերվում համընկնումից, բայց պակաս չէ դրա վեսից։

Այս հիմնական բնագրերն էլ կարող են ունենալ իրենց զանազան տարբերակները։

Ձեռագրերի դասակարգումն ավարտվում է ըստ բնագրային հատկանիշների որոշված խմբերը ձեռագրերի արտաքին հատկանիշների հաշվառումով ստուգելուց, հնարավոր փոփոխություններ ու ճշգրտումներ կատարելուց հետո։

Սակայն այդ վերջնական գործողություններից առաջ ըստ բնագրային հատկանիշների վերևում կատարված, դեռևս ավարտուն չհամարվող դասակարգումը մենք շտապեցինք համեմատել Մ. Տեր-Մովսիսյանի՝ ըստ ձեռագրերի արտաքին հատկանիշների կատարված դասակարգման հետ, ձեռագրախմբերի, եթե ոչ լրիվ, ապա գոնե ընդհանուր համապատասխանության ակնկալությամբ։ Համեմատության արդյունքը սպասածից ավելի գոհացուցիչ էր և, բնականաբար, ոգևորիչ։ Ուրեմն, կարելի էր վստահորեն կատարել վերջին քայլը ձեռագրախմբերը ճշգրտել ըստ բնագրերի արտաքին հատկանիշների՝ գրոց կանոնի, նախադրությունների, գլխացանկերի, գլխաբաժանման, արտականոն գրքերի ու գրվածքների, տարընթերցվածների ժամանակագրության, իսկ առանձին դեպքերում նաև ըստ այլ հատկանիշների։

Վերջապես, վերևում նկարագրված բազմահատկանիշ դասակարգման Եղանակի կիրառումով Աստվածաշնչի հայերեն թարգմանության ձեռագրերը որոշակի կերպով բաժանվեցին չորս հիմնական խմբի.

I *խումբ (5—24 ՆՏ)*—B. C_1 C_2 C_6 D_3 D_8 E_4 E_0 F_5 F_6 G_6 G_0 H_2 I_3 K_6 K_7 K_8 L_2 L_4 L_5 M_1 M_2 M_0 N_2 O_2 O_9 P_7 P_8 Q_1 R_1 R_8 S_2 S_8 T_4 T_0 V_6 V_7 V_8 a *(39 ձեռագիր)*.

II *խումբ (5—12 ՆՏ)*—C_5 I_5 J_3 L_8 N_6 O_3 O_7 O_8 P_1 P_3 P_6 P_9 Q_2 Q_5 R_1 R_3 R_6 T_3 U_2 *(19 ձեռագիր)*.

III *խումբ (0—4 ՆՏ)*—E_2 F_7 F_9 L_3 N_1 O_1 O_6 *(7 ձեռագիր)*.

IV *խումբ (22—48 ՆՏ)*—C_8 G_1 G_3 G_5 H_3 H_4 I_1 J_2 N_6 P_0 U_6 *(11 ձեռագիր)*։

Ձեռագրերի այդ խմբերը, որ համապատասխանաբար ունեն 16, 8, 1, 32 միջին ՆՏ, իրարից անկախ են և դրանց հավասար կամ մոտ թվով ՆՏ ունեցող ձեռագրազույգերի ՆՑ շատ փոքր է կամ հավասար է զրոյի։

Դասակարգման ամբողջ ընթացքում պետք է նկատի ունենալ.

ա) Բնագրերի համեմատության, առադրական տախտակների կազմության, տարընթերցվածների համընկնումների, ՆՑ հաշվարկումների և այլ գործողությունների ընթացքում հնարավոր սխալները և վրիպումները, որոնք կարող են անդրադառնալ աշխատանքի ճշտության վրա։

բ) Թվերի կլորացումը (տասնորդական մասերի ամբողջացումով կամ անտեսումով) էական նշանակություն չունի, մանավանդ երբ ձեռագրերի տարբերությունն ակնհայտ է ՆՑ ամբողջ թվերից։

գ) ՆՏ 1—2, իսկ առանձին դեպքերում նաև 3—4 տարբերությունը, ձեռագրերի մյուս հատկանիշների նույնության կամ մոտիկության դեպքում նույնպես էական նշանակություն չունի։

դ) Հետազոտություններից պարզվում է, որ ձեռագրերի ժամանակագրական կարգը համապատասխանում է դրանց ՆՏ թվերի աճող շարքին, այսինքն՝ դրանք ուղիղ համեմատական են։ Հետևաբար ըստ ՆՅ դասակարգված նման և ծագումնակից ձեռագրերի սխեմաներում հորիզոնական (մասամբ նաև ուղղահայաց) շարքերում պետք է պահպանվի ձեռագրանիշերի այբբենականությունը։ Այդ շարքերում նախորդ ձեռագրի ՆՏ թիվը պետք է փոքր (կամ հավասար) լինի հաջորդ ձեռագրի ՆՏ թվից։ Հակառակ դեպքում, եթե ՆՏ տարբերությունը մեծ չէ, ՆՏ թվերից հաջորդի մեծ լինելը նախորդից չպիտի դիտվի որպես անկանոնություն, որովհետև ձեռագրերի ժամանակագրական կարգի ու ՆՏ շարքի համապատասխանությունը, այնուամենայնիվ, խիստ ու անխախտելի օրինաչափություն չէ։ Հնարավոր է, որ գրիչը ձեռագիրն ընդօրինակեր նախօրինակի սխալների ու վրիպումների ուղղումներով, այլև սրբագրումներով, դրանով իսկ նվազեցնելով նոր ձեռագրի ՆՏ թիվը։ Այդուհանդերձ չի բացառվում նաև գրիչի կողմից թույլ տրված նոր սխալների ու վրիպումների հավանականությունը։

ե) Բնագրերում հետագա անձանց կողմից կատարված բոլոր կարգի միջամտությունները՝ ավելացումները, անփույթ ջնջումները, տեղնուտեղը կատարված դժվարընթեռնելի ուղղումները և այլն, մեծապես դժվարացնում են տարբերությունների ճշտությամբ որոշելը։ Նման դեպքերում պահանջվում են լրացուցիչ պրպտումներ, բանասիրական փորձ ու հմտություն և անորոշությունները գնահատելու համապատասխան մոտեցում։ Այսպես, մի շարք ձեռագրերում պարզ երևում է, որ լուսանցքային ֆռ (ֆռանգաց) գլխանիշը ավելացված է հետագայում, երկրորդ գրիչի ձեռքով։ Ուրեմն, եթե այդ ձեռագիրն իր բոլոր հատկանիշներով մոտ է այնպիսի ձեռագրերի, որոնք չունեն ֆռ գլխանիշը, ապա վերջինս տարբերակիչ նշանակություն չպիտի ունենա այդ ձեռագիրը համեմատվող մյուս ձեռագրերի հետ մի խմբում դասելու համար։

Դասակարգման վերևում կիրառված սկզբունքներից շեղվող երևույթների մեծ մասը պայմանավորված է դարերի ընթացքում հայերեն ձեռագրերի կրած փոփոխություններով։ Հետաքրքիր է, որ աշխատանքի ընթացքում, շատ հաճախ, հաշվարկումներն ուղղակիորեն կռահել են տալիս այդ շեղումների տակ թաքնված իրողությունները, դրանով իսկ օգնում ճշգրտելու դասակարգումը և հաստատելու սկզբունքը։

Ստորև բերվում են Աստվածաշնչի հայերեն թարգմանության Մակաբայեցոց գրքերն ունեցող ձեռագրերի դասակարգման սխեմաներն ըստ խմբերի։ Նախօրինակից անմիջականորեն ծագող ձեռագիրը դրվում է աջ կողմում, հորիզոնական գծիկից հետո, ապա հաջորդում են մյուս ձեռագրերն ըստ ՆՅ աճող թվերի։ Մնացած ձեռագրերը դասավորված են ներքևում, ուղղահայաց շարքով, ՆՏ թվերի աճման կարգով։ Նույնական ձեռագրերի միջև գծիկ չի դրվում։ Հորիզոնական շարքերում ձեռագրերի հաջորդական կարգը համապատասխանում է դրանց ժամանակագրական կարգին։ Ձեռագրերի ենթադրվող, անհայտ, նախօրինակները նշանակված են շրջանագծով։



Աստվածաշնչի աղբյուրների ընդհանուր սխեման կլինի.



Ձեռագրախմբերից առաջին երեքն ինքնուրույն են և ծագում են Աստվածաշնչի բնօրինակի տարբեր օտար խմբագրություններից, իսկ չորրորդ խումբը ծագում է հայերեն ձեռագրերի առաջին խմբից։

Եզրակացություններ.

1. Երեք զուգահեռ, իրարից անկախ ձեռագրախմբերի առկայությունը վկայում է, որ V դ. Աստվածաշունչը հայերեն է թարգմանվել հավանաբար տարբեր օտար բնօրինակներից՝ տարբեր օտար խմբագրություններից։ Ճշտությամբ չենք կարող ասել (և այդ ասելը դուրս է հոդվածիս նպատակից),

թե ձեռագրերի առաջին երկու խմբերից որն է հունարենից և որը ասորերենից, ավագ թարգմանիչների կողմից թարգմանված հայերեն նախօրինակներից սերվում։ Մինչդեռ երրորդ խմբի ձեռագրերը հանդիսանում են 431 թ. հետո, կրտսեր թարգմանիչների կողմից Կոստանդնուպոլսից բերված հունարեն օրինակի, յոթանասնից կոչվող խմբագրության հայերեն թարգմանության հետագա ընդօրինակություններ։

2. Երրորդ խմբի $O_1F_7F_9$ ձեռագրերը ուղղակի կապ չունեն այդ խմբի մյուս դրո ՆՏ ունեցող ձեռագրերի հետ։ Դրանք, հավանաբար, Աստվածաշնչի յոթանասնից կոչվող խմբագրության հայերեն հնագույն թարգմանության ընդօրինակություններն են, որոնք առանձին խումբ չեն կարող կազմել և երրորդ խմբի մեջ են մտցվել պայմանականորեն, փոքր թվով ՆՏ ունենալու պատճառով։

3. Խմբերի ներսում արտաքին հատկանիշներով տարբերվող ձեռագրերը մեծ մասամբ ծագում են անհայտ նախօրինակներից։ Պետք է ենթադրել, որ տվյալ խմբին ոչ բնորոշ հատկանիշները հիմնականում հին ձեռագրերում կատարված հետագա միջամտումների արդյունք են։

4. Ձեռագրերի խմբագրական, սրբագրական ու գրչագրական տարբերությունները շատանում և ակնառու են դառնում XIII դարից սկսած, կապվելով գլխավորապես Գևորգ Սկևռացու և նրա հետևորդների կողմից Աստվածաշնչի կանոնում կատարված փոփոխումների, նախադրությունների ու գլխացանկերի ավելացման և մասամբ էլ հայերեն թարգմանությունը լատինական օրինակի համեմատությամբ սրբագրելու հետ։ Նախադրությունների ու գլխացանկերի կարգի անմիօրինակությունը միտում է ենթադրելու, թե Գևորգ Սկևռացին չէ բոլոր նախադրությունների ու գլխացանկերի հեղինակը, դրանց մի մասը թերևս կազմված է հետագայում, անհայտ անձանց կողմից։

5. Մ. Տեր-Մովսիսյանը հիմնականում ճիշտ է դասակարգել Աստվածաշնչի հայերեն ձեռագրերը ըստ դրանց արտաքին հատկանիշների։ Նրա առանձնացրած հինգերորդ խմբի ձեռագրերը՝ Ղազար Բաբերդցու առաջաբանով, տնատումով, բոլոր արտականոն գրքերով, կանոնի աղյուսակով ու բառացանկով հանդերձ, բնագրային տեսակետից առանձին խմբագրություն չեն ներկայացնում, հետևաբար մեր դասակարգման մեջ, ըստ իրենց հատկանիշների ամբողջության, առանձին ձեռագրախումբ չեն կազմում։

6. Դասակարգման համար ընտրված 82 խմբագրական բնույթի տարբերթերցվածներից շուրջ 30-ը, ըստ ձեռագրերի գրության ժամանակների, հանդես են եկել XIII դարում, գլխավորապես չորրորդ խմբի ձեռագրերում։

Մի շարք տարբերթերցվածներ էլ, որոնք վերևում համարվեցին խմբագրորեն չեզոք, հանդես են գալիս XVI—XVII դդ. և վերաբերում են առաջին և երկրորդ խմբի ձեռագրերին։ Այդ կարգի տարբերթերցվածները դասակարգման ընթացքում հաշվի են առնվել հաղվագյուտ դեպքերում։ XVI—XVII դդ. արդեն գրեթե գոյություն չուներ Աստվածաշնչի բնագրերում փոփոխություններ կատարելու նախկին սովորությունը և այդ շրջանի ձեռագրերը աչքի են ընկնում գլխավորապես ուղղագրական ու գրչագրական առանձնահատկություններով։

7. Չորրորդ խմբի ձեռագրերը մեծ մասամբ ծագում են առաջին խմբի ձեռագրերից կամ դրանց նախօրինակներից։ Այդ երկու խմբի ձեռագրերը չունեն ֆռ գլխանիշը և, ինչպես նշում է Մ. Տեր-Մովսիսյանը, ֆռանգանց

գլխաբաժանումն ստհասարակ հատուկ չէ հնագույն բնագրերին, մեր դասակարգումով երրորդ և չորրորդ խմբերի բոլոր ձեռագրերին և առաջին խմբի ձեռագրերի մի մասին։ Երկրորդ խմբի ձեռագրերը, որոնք ունեն ֆռ ատանիշը, հիմնականում վերաբերում են XVII դարին։

Աստվածաշնչի ձեռագրերի վերը տրված դասակարգումը, ինչպես արդեն նշվել է, վերջնական ու անթերի չի կարող լինել։ Այն կաբող է փոփոխվել գիտահամեմատական նոր բնագրերի, ինչպես նաև նորահայտ ձեռագրերի փաստերի հիման վրա, դառնալով ավելի հավաստի ու կայուն։ Դասակարգման եզանակը, որ կարելի է կիրառել թերևս նաև այլ դասակարգումներ կատարելու համար, ընդհանուր ճանաչում ստանալ բնավ չի հավակնում, այլ սպասում է մասնագետների կարծիքներին և առաջարկներին։

ОПЫТ КЛАССИФИКАЦИИ РУКОПИСЕЙ НА ОСНОВЕ КНИГ МАККАВЕЙСКИХ

Доктор филол. наук Г. М. АМАЛЯН

(Резюме)

Классификация рукописей армянского перевода Библии имеет важное значение для составления его критического текста. На основе сличения 75 рукописей Книг Маккавейских в статье делается попытка классификации рукописей с учетом всех существенных признаков. Применены вычислительные способы учета количественных отношений рукописных разночтений и других расхождений. Учтены также композиционные, каллиграфические, орфографические и другие внешние признаки различных списков Библии, сличенных с основным экземпляром текста.

Окончательный результат классификации получается в итоге последовательных действий вычисления основных количественных показателей. Приводятся формулы и определяются основные понятия, используемые в статье, с указанием причин и обстоятельств возможных расхождений с принципами и схемами метода многопризнаковой классификации рукописей.

Установлены четыре группы армянских рукописей Библии (I—IV), объединяющие соответственно 39, 19, 7 и 11 рукописей. Приводятся схемы групп генетически родственных рукописей, а также общая схема подлинника и редакций текста Библии с соответствующими армянскими переводами и их рукописными группами.